

ПОЛИТИКА

Ռուսաստան Արցախի հարաբերությունները հայոց ազգային ազատագրական պայքարի եվ արդի իրողությունների համատեքստում. միտումները եվ հնարավորությունները¹

Փաշայան Հրայր Ա.

Արցախի պետական համալսարանի և Մեսրոպ Մաշտոց համալսարանի դասախոս,
բ. գ. թ., դոցենտ (Ստեփանակերտ, Արցախի Հանրապետություն)
hrayr.pashayan@mail.ru

ՀՏԳ՝ 327; EDN: LRRLCO

Հանգուցաբառեր՝ ռուս-արցախյան հարաբերությունների պատմություն, Ղարաբաղյան հակամարտություն, խաղաղապահ զորախումբ, անվտանգություն, աշխարհաքաղաքական զարգացումներ, Ադրբեյջան, Արցախ, Ռուսաստան:

Отношения Россия-Арцах в контексте армянской национально-освободительной борьбы и современных реалий: тенденции и возможности

Пашаян Грайр А.

Преподаватель Арцахского государственного университета и Университета Месропа Маштоца, кандидат политических наук, доцент (Степанакерт, Республика Арцах)
hrayr.pashayan@mail.ru

Аннотация. Как и на разных этапах истории российско-арцахских отношений, после войны 2020 года роль гаранта безопасности Республики Арцах вместе с Армией обороны в основном играют миротворцы Российской Федерации. Многовековые традиции армяно-русских народов, культурные связи с Арцахом и общее прошлое, сформировавшиеся как в советские годы, так и в период существования Российской империи, в современных условиях дают нам возможность вывести их на новый, более высокий уровень.

В целом история российско-арцахских отношений и все содержание нынешней ситуации приводит к тому, что без поддержки такой мощной внешней силы невозможно обеспечить безопасность Республики Арцах и ее народа. Иными словами, присутствие Российской Федерации мешаает Азербайджану окончательно перекрыть карту Южного Кавказа в соответствии со своими предположениями.

Поэтому, если мы хотим, чтобы российские миротворцы оставались в Арцахе до окончательного правового урегулирования конфликта, что отвечает интересам и Арцаха, и России, мы должны постоянно работать в этом направлении, ставить цель, пусть и медленно, но уверенно идти к этой цели. В сложившейся ситуации только Российская Федерация может помочь восстановить потенциал самообороны Арцаха, что особенно актуально в условиях краха современной международной системы. При этом два основных пути освобождения нашей страны, выдвинутые видными представителями армянской политической мысли XVIII века, помощь России и понимание необходимости раскрытия и объединения человеческого, материального и духовного потенциала нации, снова стали на повестку дня.

Ключевые слова: история российско-арцахских отношений, карабахский конфликт, миротворческие силы, безопасность, геополитические процессы, Азербайджан, Арцах, Россия.

Russian-Artsakh relations in the context of the Armenian national liberation struggle and modern realities: tendencies and opportunities

Pashayan Hrayr A.

Lecturer at Artsakh State University and Mesrop Mashtots University,
Candidate of Political Science, Associate Professor (Stepanakert, Republic of Artsakh)
hrayr.pashayan@mail.ru

Abstract. As in different stages of the history of Russian-Artsakh relations, after the 2020 war, the role of the guarantor of the security of the Artsakh Republic together with the Defense Army is mainly played by the peacekeepers of the Russian Federation. The centuries-old traditions of the Armenian-Russian peoples, the cultural ties with Artsakh and the common past, which were formed both during the Soviet years and during the existence of the Russian Empire, give us opportunities to take them to a new and higher level in modern conditions.

In general, the history of Russian-Artsakh relations and the whole content of the current situation leads to the fact that without the support of such a powerful external force, it is impossible to ensure the security of the Artsakh Republic and

¹ Հետազոտությունն իրականացվել է ԱՀ ԿԳՄՍ նախարարության կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության N° scs20-003 գիտական թեմայի շրջանակներում:

its people. In other words, the presence of the Russian Federation prevents Azerbaijan from finally redrawing the map of the South Caucasus in accordance with its ideas.

Therefore, if we want the Russian peacekeepers to remain in Artsakh until the final legal settlement of the conflict, which is in the interests of both Artsakh and Russia, we must constantly work in that direction, set a goal, albeit slowly, but confidently pursue that goal. In the current situation, only the Russian Federation can help restore Artsakh's self-defense potential, which is especially true in the context of the collapse of the modern international system. In this case, the two main ways of liberation of our country put forward by prominent representatives of the Armenian political thought in the 18th century, the help of Russia and the understanding of the need to discover and unite the human, material and spiritual potential of the nation, have become on the agenda again.

Keywords: history of Russian-Artsakh relations, Karabakh conflict, peacekeeping force, security, geopolitical developments, Azerbaijan, Artsakh, Russia

Ինչպես հայտնի է, 2020 թվականի նոյեմբերի 10-ին Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինի, Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանի և Ադրբեյջանի Հանրապետության նախագահ Իլհամ Ալիևի կողմից ընդունվեց Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտում կրակի և բոլոր ռազմական գործողությունների լիակատար դադարեցման մասին հայտարարություն [24]: Պատերազմի հետևանքով ստեղծվել է մի իրավիճակ, երբ Հայաստանի Հանրապետությունն օբյեկտիվ կամ սուբյեկտիվ հանգամանքների բերումով այլևս չի կարողանում իրականացնել Արցախի Հանրապետության հայապահպան մնացած հատվածի անվտանգության երաշխավորի երբեմնի դերակատարությունը: Այդ խնդիրը ներկայումս Պաշտպանության բանակի հետ միասին հիմնականում իր վրա է վերցրել Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ զորախումբը, զսպելով ադրբեյջանական կողմի պարբերաբար իրականացվող սադրանքներն ու հեռուն գնացող նպատակները: Հաշվի առնելով Ղարաբաղյան հակամարտությունը ավարտված համարելու ադրբեյջանական կողմի ապակառուցողական դիրքորոշումը [27], Թուրքիայի անվերապահ աջակցությունն ու մեր երկրի շուրջ ձևավորված բազմաթիվ այլ հանգամանքներ, ենթադրել կարելի է, որ աշխարհաքաղաքական ներկա իրողությունների պայմաններում Արցախի շուրջ հնարավոր են ինչպես սրընթաց զարգացումներ, այնպես էլ գոյություն ունեցող ստատուս-քվոյի տասնամյակներով պահպանում [20]:

Բնականաբար նման պայմաններում անհրաժեշտ է մի կողմից վերաժևորել ռուսարցախյան հարաբերությունների պատմական ընթացքը, մյուս կողմից՝ ներկա իրողությունների հաշվառումով նախանշել այդ հարաբերությունների զարգացման միտումներն ու հնարավորությունները՝ սպառնալիքներին ու մարտահրավերներին դիմակայելու համար:

Ռուսաստան Արցախ հարաբերությունները Հայոց ազգային ազատագրական պայքարի համատեքստում: Ռուսաստան Արցախ առնչությունների մասին առաջին հիշատակությունները մեզ են հասել դեռևս 7-րդ

դարի պատմիչ Մովսես Կաղանկատվացուց [7]: Ըստ տեղեկությունների՝ արդեն 943-944 թվականներին ռուսական շոկատները Կուր գետով բարձրանալով հայտնվեցին Պարտավի մատույցներում [13]: Տեղեկություններ կան նաև, որ նշված շրջանում ռուս առևտրականները Սև ծովի, Դոնի և Կասպից ծովի վրայով մորթիներ և այլ ապրանքներ են տարել Բաղդադ և Մերձավոր Արևելքի այլ երկրներ [12]: Մոսկովյան պետության հզորացմանը զուգընթաց, ցարական կառավարությունը սկսեց ավելի մեծ հետաքրքրություն ցուցաբերել Այսրկովկասի նկատմամբ: Նման պայմաններում հայ ժողովրդի այս հատվածի քաղաքական ձգտումները զգալիորեն համընկնում էին ցարական կառավարության ռազմա-քաղաքական շահերին:

Դեռևս Կիլիկիայի Հայկական պետականության անկումից հետո, քաղաքական գործիչները արևմտաեվրոպական քրիստոնյա տերությունների օգնությամբ հայ ժողովրդի ազատագրության ուղիներ էին որոնում: Հռոմի պապի և եվրոպական միապետների հետ շուրջ երեք դարյա բանակցություններից հետո, 17-րդ դարում հայ քաղաքական միտքը հակվում է դեպի Ռուսաստան: Ժամանակի հայ քաղաքական մտքի պատմության այնպիսի նշանավոր գործիչներ, ինչպիսիք են Իսրայել Օրին, Հովսեփ Էմինը, Մովսես Բաղրամյանն ու Շահամիր Շահամիրյանը, լինելով տարբեր երկրներում, Հայաստանի ազատագրության և ինքնիշխան պետություն ստեղծելու ծրագրերը վերջնականապես կապեցին Ռուսաստանի հետ: Այդ նպատակի իրականացման համար նրանք առաջ էին քաշել այնպիսի ծրագրեր ու զաղափարներ, որոնք արդիական են նաև մեր օրերում: Եթե Իսրայել Օրին [14], Հովսեփ Էմինը [10] և Շահամիր Շահամիրյանը [3] Հայաստանի ազատագրության համար հիմնական շեշտը դնում էին Ռուսաստանի օգնության վրա, ապա Մովսես Բաղրամյանի պարսկա-թուրքական լծից Հայաստանն ազատագրելու և անկախ պետություն ստեղծելու կարևորագույն պայմանը կենսունակ հայրենիքի գոյության գիտակցումն է, ազգի մարդկային, նյութական ու

ոգեղեն ներուժի բացահայտման ու համախմբման անհրաժեշտության ըմբռնումը [2]:

Հատկանշական է, որ հայոց ներուժի կարևորագույն օղակը Հայաստանի ազատագրության գրեթե բոլոր նախաձեռնողները, համարում էին Արցախի մելիքությունները, որտեղ պետք է առաջինը վերականգնվեր համազգային պետության սողմերը և նրա տնտեսական ու ռազմական հզորությունը օգտագործվեր ողջ Հայաստանի ազատագրության համար: Բանն այն է նաև, որ բացի ծրագրերից ու գաղափարներից անհրաժեշտ էր երկիրը ներկայացնող որևէ վարչաքաղաքական մարմին, որը կկարողանար այդ նպատակները դիվանագիտորեն մատուցել և ռուսական արքունիքի հետ անհրաժեշտ փոխհարաբերություններ ստեղծել: Նման վարչաքաղաքական միավորների դեր որոշակիորեն կատարում էին հայկական իշխանական տները, որոնցից առավել կենսունակները մելիքական անվամբ պահպանվել էին Արցախում: Հետաքրքիր է նաև այն փաստը, որ ի տարբերություն Հայաստանի մյուս նահանգների քաղաքական գործիչների, Ղարաբաղի աշխարհիկ և հոգևոր տերերը ի սկզբանե երկրի ազատագրությունը կապեցին ոչ թե Եվրոպայի, այլ Ռուսաստանի հետ [1]:

Այսպես, դեռևս 1670-1671 թվականներին Գանձասարի Պետրոս Կաթողիկոսը հատուկ ուղերձով դիմում է ռուսական ցարին՝ հայերին իր հովանավորության տակ վերցնելու խնդրանքով [8]: 1677 թ. Կաթողիկոս Հակոբ Ջուղայեցու գլխավորությամբ Էջմիածնում հրավիրված գաղտնի ժողովին մասնակցել են Սյունանց և Արցախի հայ մելիքների ներկայացուցիչները [6]:

Պետրոս Առաջինի գահակալության տարիներին ռուս-արցախյան ռազմաքաղաքական կապերի զարգացմանը նպաստում էր վերջինիս բարյացակամ վերաբերմունքը: Այդ ժամանակ ռուսաց կառավարության հարաբերությունները հիմնականում Գանձասարի կաթողիկոսության հետ էին [4]: Ռուսաստանի օգնությամբ Հայաստանի ազատագրության ջատագովներից էր Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանը, որն արտահայտում էր ոչ միայն Արցախի հոգևոր, այլև աշխարհիկ խավի շահերը: Արցախահայության այդ ձգտումները անձամբ Պետրոս Առաջինին հաղորդելու համար 1710 թվականին Եսայի կաթողիկոսը Պարսկաստանից վերադարձող Իսրայել Օրու պատվիրակությանը միացավ և ուղևորվեց դեպի Ռուսաստան: 1716 թվականին Եսայի կաթողիկոսը Ղարաբաղի մելիքների անունից դիմեց Պետրոս առաջինին՝ խնդրելով նրանց վերցնել Ռուսաստանի հովանավորության տակ [15]:

Պետք է փաստել, որ ռուսական կողմն իր հերթին, հայերի մոտ ռուսական կողմնորոշումը

վառ պահելու նպատակով համապատասխան հավաստիացումներ էր տալիս, որոնք իրականությունից զուրկ չէին: Ռուսական արքունիքը դեռևս 18-րդ դարասկզբին Իսրայել Օրուն հայտնել էր, որ Հայաստանի ազատագրության խնդրով կզբաղվի Հյուսիսային պատերազմի բարեհաջող ավարտից հետո [14]: Շվեդիայի հետ 1721 թվականին Նիտշտադտի հաղթական պայմանագրի ստորագրումը ռուսական կառավարությանը հնարավորություն տվեց ձեռնամուխ լինել արևելյան քաղաքականության հրատապ խնդիրների իրագործմանը: Այս առումով արցախահայության ազատագրական որոնումները համընկան Պետրոս Մեծի հայտնի պարսկական կամ կասպիական արշավանքի հետ: Ռուսաստանը նպատակ ուներ մետաքսի ամբողջ արտահանությունը Թուրքիայի ցամաքային ճանապարհներից շրջելու Դնեպրի, Կասպից ծովի և Վոլգայի ջրուղին և գրավելու Ղարսկաստանի ծովափնյա նահանգները [33]:

Նախապատրաստական որոշ աշխատանքներից հետո՝ 1722 թ. օգոստոսին, ռուսական զորքերը մտան Դերբենտ՝ նպատակ ունենալով առաջ շարժվել, գրավել Կասպից ծովի արևմտյան եզերքը և Շամախիում միավորվել քաղաքը գրաված հայ և վրաց զինական ուժի հետ: Ստանալով ռուսական զորքերի արշավանքի երկար սպասված լուրը՝ վրացական 30-հազարանոց զորաբանակը Վախթանգ 6-րդ թագավորի առջնորդությամբ, և հայկական 10-հազարանոց ընտիր և սպառազեն զորքը Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան Ջալալյանի գլխավորությամբ 1722 թվականի սեպտեմբերի 22-ին հանդիպեցին և միավորվեցին Գանձակի մոտ գնվող Չոլակի դաշտում [5]: Բայց դեպքերի հետագա զարգացումը բոլորովին այլ հունով ընթացան, կապված ինչպես եղանակային պայմանների, այնպես էլ միջազգային իրադրության հետ, ինչը դրդեց ռուսական կայսրությանը հետաձգել ռազմական գործողությունները: Ավելի ուշ՝ 1724 թվականին ստորագրված ռուս-թուրքական պայմանագրով, ըստ էության ողջ Այսրկովկասը թողնվեց Օսմանյան կայսրությանը: Եվ չնայած սուլթանական կառավարության հողորներին՝ վայր դնել զենքը և անվերապահորեն ենթարկվել իրեն, արցախահայության ազգային ազատագրական պայքարը շարունակվեց՝ մշտապես ունենալով այն հույսը, որ Ռուսաստանը այնուամենայնիվ օգնության ձեռք կմեկնի: 1813 թվականին Գյուլիստանի պայմանագրի ստորագրմամբ [22], Ռուսաստանի կազմում հայտնված Արցախը ստացավ ազատություն ձեռներեցության և լուսավորչության բնագավառներում, Շուշին դարձավ Անդրկովկասում Թբիլիսիից հետո կուլտուրայի, մշակույթի, կրթության երկրորդ հայկական կենտրոնը: Հայերն իրենց հերթին

ակտիվորեն մասնակցեցին բոլոր ռուս-թուրքական, ռուս-պարսկական պատերազմներին, առաջադրելով հռչակավոր ու երևելի հրամանատարների մի ամբողջ համաստեղություն:

Հայ քաղաքական մտքի դեպի Ռուսաստան կողմնորոշվելը բացատրվում է հետևյալ հանգամանքներով:

1. Նախևառաջ հայ գործիչները համոզվեցին, որ Եվրոպական տերությունները լիովին հակված են դեպի Պարսկաստանն ու Թուրքիան:

2. 17-րդ դարի երկրորդ կեսին Ռուսաստանը դուրս եկավ միջազգային ասպարեզ:

3. Տվյալ ժամանակահատվածում Ռուսաստանն ընդարձակելով իր պետական սահմանները, մոտեցել էր Այսրկովկասին և ձգտում էր իր ազդեցությունը տարածելով այդ երկրամասի վրա՝ կայսրության համար ճանապարհի հարթել դեպի Հնդկաստան: Իսկ այս պայմաններում կամա թե ակամա Ռուսաստանի շահերը պետք է բախվեին Թուրքիայի, Պարսկաստանի և նրանց հովանավորող Եվրոպական տերությունների հետ:

4. Այսրկովկասում Ռուսաստանին անհրաժեշտ էր քաղաքական մի ուժ, որի վրա հենվելով պիտի իրականացնի իր արևելյան քաղաքականությունը: Որպես այդպիսի ուժ Այսրկովկասում հանդես էին գալիս Վրաստանը, Սյունիքի և Արցախի մելիքությունները:

5. Չպիտի թերագնահատել նաև ցարական իշխանությունների, մանավանդ Պետրոս առաջինի հակաթուրքական տրամադրությունը: Տակավին իննիսունական թվականների վերջին, ուղևորվելով Արևմուտք, Պետրոս ցարը հայտարարում էր, որ մշակութային նպատակներից զատ, իրեն գրավում է «Տիրոջ խաչի թշնամիների, թուրքաց սուլթանի, Ղրիմի խանի և բոլոր մուսուլմանական հորդանների թուլացումը» [1]:

Ռուս-արցախյան հարաբերությունների զարգացման արդի միտումներն ու հնարավորությունները: Պատմական փաստերը վկայում են, որ ռուս-արցախյան հարաբերությունների առանցքը կազմել են փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող երկու հանգամանքներ: Արցախի համար Ռուսաստանի հետ հարաբերությունների հաստատման հիմքում բոլոր ժամանակներում նախևառաջ ընկած է եղել անվտանգության բաղադրիչը: Պատահական չէ, որ հայ ազգային ազատագրական շարժումները և Հայոց պետականության վերականգնման փորձերը, միջնադարյան հայոց պետության անկումից հետո, հիմնականում կապվել են Արցախի մելքների հետ, իսկ դա հնարավոր էր իրագործել Ռուսաստանի օգնությամբ:

Ռուսաստանի կողմից Արցախի և ընդհանրապես տարածաշրջանի երկրների հետ

հարաբերությունների հաստատումը, սկսած Պետրոս Մեծի կապիական արշավանքից, բնականաբար կարևորվել է սեփական աշխարհաքաղաքական շահերի սպասարկման, այդ թվում՝ որպես Արևելքի երկրների հետ կապող օղակի համատեքստում: Եվ դա բնական է, քանի որ պետությունների միջև հարաբերություններն ու նրանց կողմից իրականացվող քաղաքականությունը հիմնված են փոխադարձության սկզբունքի վրա: Դա նշանակում է, որ Ռուսաստանի հետ հարաբերություններում մշտապես պետք է հաշվի առնել այս հանգամանքը, և փորձել փոխադարձ շահերի իրացմամբ հասնել առաջադրված նպատակներին: Այսպես այդ դերակատարությունը մեր փոխարեն կարող են իրականացնել այլոք, որի դեպքում, ինչպես նույն պատմական փաստերն են վկայում՝ սկսած Իբրահիմ խանից [11] ու Լեոնային Ղարաբաղը ԱդրԽՍՀ կազմ մտցնելու որոշումից [9], մենք նորից հայտնվելու ենք լուսանցքում, մեր հայրենիքի հաշվին նորից գործարքներ են իրականացվելու՝ իրենց անդառնալի հետևանքներով:

Ադրբեջանի ռազմաքաղաքական դեկավարության կողմից Արցախի նկատմամբ իրականացվող սադրիչ գործողությունների, Լեոնային Ղարաբաղի հիմնահարցը 2020 թվականի պատերազմի արդյունքում լուծված համարելու հայտարարությունների և ուժի դիրքերից Հայաստանի Հանրապետությանը սեփական պատկերացումներին համապատասխան խաղաղություն պարտադրելու քայլերի համատեքստում [26], Արցախի պետականության ու ժողովրդի ճակատագիրը հայտնվել է պատմության հերթական երկրնորանքի հանգրվանում: Դրա հանգուցալուծման գործընթացում հերթական անգամ որոշիչ դերակատարությունը պատկանում է Ռուսաստանի Դաշնությանը:

Ընդհանրապես ռուս-արցախյան հարաբերությունների պատմությունն ու ներկայիս իրավիճակի ողջ բովանդակությունը հանգում է նրան, որ առանց այդպիսի հզոր արտաքին ուժի աջակցության Արցախի Հանրապետության և նրա ժողովրդի անվտանգության ապահովումը արդի պայմաններում անհնարին է [17]: Այլ կերպ ասած՝ Ռուսաստանի Դաշնության ներկայությունն է խոչընդոտում Ադրբեջանին Հարավային Կովկասի քարտեզը իր պատկերացումներին համապատասխան վերջնականապես վերագծելու հարցում [30]: Իրավիճակն ավելի է բարդանում Ուկրաինայում և նրա շուրջ տեղի ունեցող իրադարձությունների պատճառով, քանի որ ռազմական գործողությունների հնարավոր հետևանքները իրենց անմիջական ազդեցությունն են ունենալու մեր տարածաշրջանում [32]: Միաժամանակ, կարծում ենք, որ այդ իրադարձությունները որոշակիորեն սրբա-

գրում են Ռուսաստանի Դաշնության աշխարհաքաղաքական առաջնահերթություններն ու նրան կատմամբ տարածաշրջանի երկրների դիրքորոշումները [34]:

Հաշվի առնելով Ռուսաստան-հավաքական Արևմուտք խորացող հակասություններն ու դրան հակառակ Արևելքի երկրների հետ Ռուսաստանի մերձեցման միտումները, կարելի պնդել, որ տեսանելի ապագայում այս միտումը ավելի կխորանա: Չրկվելով Արևմտյան երկրների հետ տնտեսական, տրանսպորտային և մյուս ոլորտներում համագործակցելու հնարավորությունից, աշխարհի ամենախոշոր ու բնական ռեսուրսներով հարուստ երկիրը նոր հարաբերություններ ու կապեր է ստեղծելու Արևելքի երկրների հետ: Այս դեպքում Այսրկովկասը հերթական անգամ կդառնա կապող այն օղակներից մեկը, որը դեռևս Պետրոս Մեծի օրոք կարևորվել է դեպի Հնդկաստան ու Արևելքի մյուս երկրներ դուրս գալու համար: Դրանից կարելի է ենթադրել, որ առաջիկայում Ռուսաստանը հավելյալ քայլեր է ձեռնարկելու այս տարածաշրջանում իր դիրքերը ամրապնդելու համար [28]: Հաշվի առնելով, որ այսրկովկասյան երեք ճանաչված պետական միավորներից Վրաստանը կողմնորոշված է դեպի Արևմուտք, Ադրբեջանը՝ թուրքական աշխարհ, իսկ Հայաստանի Հանրապետությունը դեռևս գտնվում է որոնումների շրջանում, ապա կարելի է ենթադրել, որ տարածաշրջանում հաստատվելու Ռուսաստանի քաղաքականությունում առանցքային դերակատարություն են ունենալու նաև Այսրկովկասի չճանաչված պետությունները՝ այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը: Նշված երկրները մի կողմից Ռուսաստանի համար կհանդիսանան որպես երեք ճանաչված երկրների վրա ազդեցություն գործելու միջոց, մյուս կողմից՝ որպես հարթակ, Եվրասիայի՝ որպես «աշխարհի ամենահեռանկարային տարածաշրջանում» հաստատվելու համար [29]:

Ինչպես արդեն նշվեց, ռուս-արցախյան հարաբերություններումները հազարամյակների պատմություն ունենալով, գերծ չեն նաև խնդրահարույց դրվագներից: Մասնավորապես, հաշվի առնելով ռուսական խաղաղապահ զորախմբի պատասխանատվության գոտում պարբերաբար տեղի ունեցող ադրբեջանական սադրանքները¹, այդ երկրի նկատմամբ Ռուսաստանի շարունակվող բարյացակամությունը և այլ իրական ու երևակայական հանգա-

մանքներ, հայ հասարակության մի հատվածի մոտ ներկայումս ձևավորվել են որոշակի դժգոհություններ ռուսական կողմի նկատմամբ: Այս համատեքստում նույնիսկ հնչեցվում են ռուսական խաղաղապահներին միջազգային կամ կոնկրետ՝ ֆրանսիական խաղաղապահներով փոխարինելու կարծիքներ, որոնք կարծում ենք առավելապես երևակայական քան իրատեսական բնույթ ունեն: Այդուհանդերձ, կարծում ենք, այդ խնդիրների շուրջ բարեկամականին բնորոշ անկեղծ քննարկումներն ու դրանց էության բացահայտումը պատմական հետահայացում ու արդի պայմաններում, թույլ կտան ավելի ամուր հիմքերի վրա դնել և ավելի խորացնել երկուստեք փոխշահավետ համագործակցությունը: Հետևաբար զոյության իրավունք ունի նաև այն տեսակետը, որ տարածաշրջանում ներկայությունը պահպանելու համար ՌԴ-ն իր հերթին պիտի հայ ժողովրդի վստահությունը բարձրացնելու հավելյալ միջոցներ ձեռնարկի, այլապես նրանք դուրս կմնան ՀՀ-ից և Արցախից [18]:

Այս ամենով հանդերձ հստակ է մի բան. ներկայումս ՌԴ-ն դա միակ ուժն է տարածաշրջանում, որը պատրաստակամ է և գործնականում ապահովում է Արցախի բնակչության անվտանգությունը: Եվ եթե կարգավիճակի հետ կապված հարցերը թողնելով անորոշ ապագային [35]², Ռուսաստանը հանգամանքների բերումով հակված չէ Ղարաբաղյան հակամարտության շուտափույթ կարգավորմանը [19], ինչը գործնականում հնարավորություն է տալիս նաև Հայաստանին ու Ադրբեջանին դուրս չթողնել իր ազդեցության ծիրից, ապա Բրյուսելյան վերջին հանդիպումը հստակորեն ցույց տվեց, որ հավաքական արևմուտքն ի դեմս Եվրոպայի, շահագրգռված է հակամարտության շուտափույթ կարգավորմամբ՝ ի նպաստ Ադրբեջանի [16]: Ռուսաստանից կախվածությունը նվազեցնելու համար Եվրոպական երկրները արագացված տեմպերով էներգալիքների այլընտրանքային աղբյուրներ են փնտրում, որոնցից մեկն էլ Ադրբեջանն է, ինչը նպաստում է այդ երկրի օգտին Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման դիրքորոշմանը:

Հետևաբար անհրաժեշտ է Ռուսաստանի հետ հարաբերություններում գտնել այն ուղին, որը հնարավորություն կտա երկուստեք շահերի համադրմամբ ապահովել մեր հայրենիքի հայկականությունը: Պետք է ուսումնասիրել, բացահայտել և ըստ արժանվույն գնահատել նաև այն պատճառները, որոնք պատմության տարբեր հանգրվաններում Ռուսաստանի հա-

¹ Դրա մասին են վկայում ինչպես 2020 թվականի նոյեմբերի 10-ի եռակողմ հայտարարությանն անմիջապես հաջորդող ամսում՝ դեկտեմբերին Խժաբերդում և Հին Թաղերում, այնպես էլ 2022 թվականի մարտին Փառուխի հատվածում իրականացրած ռազմական գործողություններն ու տարածքային նվաճումները:

² Նույն կարծիքին է նաև ՌԴ նախկին նախագահ, անվտանգության խորհրդի նախագահի տեղակալ Դմիտրի Մեդվեդևը, ինչը փաստում է, որ դա զուտ մասնավոր կարծիք չէ: Տես՝ [31]:

մար հիմք են հանդիսացել արցախահայության շահերը ոտնահարելու համար, ինչպես օրինակ դա տեղի ունեցավ 20-րդ դարի սկզբին՝ Այսրկովկասում խորհրդային կարգերի հաստատման ժամանակահատվածում [25]: Այս համատեքստում առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել Ռուսաստան-Թուրքիա փոխհարաբերությունների զարգացումներին, դրսևորումներին ու միտումներին, որոնք պատմական տարբեր ժամանակներում ուղղակիորեն առնչվել են հայկական շահերին [21]:

Ռուսաստան-Արցախ հարաբերությունները, ի տարբերություն տարածաշրջանի մյուս խաղաղոգույների, հիմնված են պատմականորեն ձևավորված հարուստ անցյալի, արժեքների ու ավանդույթների վրա: Ինչպես խորհրդային տարիներին, այնպես էլ ռուսական կայսրության գոյության շրջանում հայ և ռուս ժողովուրդները համատեղ երկար ճանապարհ են անցել, բազմաթիվ պատմական դրվագներում միասնաբար պայքարել ընդհանուր թշնամու դեմ: Եթե տարածաշրջանը Ռուսաստանը համարում է իր անմիջական կենսական շահերի գոտին, կամ նույնիսկ ժամանակավորապես կորսված տարածք, ապա հավաքական Արևմուտքն այն առավելապես դիտարկում է որպես միջոց ՌԴ-ին վնասելու կամ նրա հնարավորությունները սահմանափակելու գործիք: Այսինքն՝ եթե ՌԴ-ի համար երկրամասը որոշակի արժեք ունի, որի պատճառով էլ հանդես է գալիս որպես ազգաբնակչության անվտանգության երաշխավոր, ապա դժվար է ասել ունի արդյոք համանման արժեք Արցախը Արևմուտքի համար, որպեսզի նա ապահովի Արցախի ժողովրդի անվտանգությունը: Արցախի կարգավիճակի նշանոցը իջեցնելու արևմուտքից ստացվող ազդակները, և տեղաբնիկ արցախահայությանը որպես «Ղարաբաղի էթնիկ հայ բնակչություն» ներկայացնելու դրդապատճառները [36], որոշակի եզրահանգումներ կատարելու հնարավորություն են տալիս³: Դա թույլ է տալիս պնդելու, որ ռուս-ուկրաինական (արևմտյան) հակամարտությամբ պայմանավորված, հանուն էներգակիրների մատակարարման այլընտրանքային աղբյուրի և ՌԴ-ն շրջանցող տնտեսական-տրանսպորտային գերտերությունների աշխարհաքաղաքական ծրագրերի, Արևմուտքը պատրաստ է բավարարելու Ադրբեյջանի ցանկություններն ու տարածքային

հավակնությունները: Ռուսաստանն իր հերթին տեսանելի ապագայում զրկվելով արևմտյան շուկաներից, իր ուշադրությունը սևեռելու է դեպի Արևելք, ինչպես բնական ռեսուրսները իրացնելու, այնպես էլ ռազմաքաղաքական ազդեցության ոլորտները ընդլայնելու համար:

Հետևաբար, եթե ցանկանում ենք, որ ռուսական խաղաղապահները մինչև հակամարտության վերջնական իրավական կարգավորումը մնան Արցախում, իսկ դա բխում է ինչպես Արցախի այնպես էլ Ռուսաստանի շահերից, պետք է այդ ուղղությամբ անընդհատ աշխատել, նպատակ դնել և թեկուզ դանդաղ, բայց վստահորեն գնալ այդ նպատակի իրականացման ճանապարհով: Ստեղծված իրավիճակում միայն Ռուսաստանի Դաշնությունը կարող է օգնել վերականգնելու Արցախի ինքնապաշտպանական ներուժը, ինչը կարևորվում է հատկապես արդի միջազգային համակարգի փլուզման պայմաններում: Այս դեպքում կրկին օրակարգային է դառնում դեռևս 18-րդ դարում հայ քաղաքական մտքի նշանավոր ներկայացուցիչների կողմից առաջ քաշված մեր երկրի ազատագրության երկու հիմնական ուղիները՝ Ռուսաստանի օգնությունն ու ազգի մարդկային, նյութական ու ոգեղեն ներուժի բացահայտման ու համախմբման անհրաժեշտության ըմբռնումը:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Քալայան Վ.**, Արցախի պատմությունը հնադարից մինչև մեր օրերը, Եր. 2002, էջ 184:
2. **Քաղաբաճյան Մ.**, «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ», Մադրաս, 1772-1773 թթ.: Այս աշխատության աշխարհաբար թարգմանությունը իրականացրել է Պ. Խաչատրյանը՝ «Նոր տետրակ, որ կոչվում է հորդորակ», Եր. 1991, 264 էջ:
3. **Համբարձումյան Ռ.**, «Որոգայթ փառաց»։ Ակունքները, այժմեականությունը եւ առանձնահատկությունները, Երևան, 1999:
4. **Հովհաննիսյան Ա.**, Էջեր Արևելյան Հայաստանի ազատագրական շարժման պատմությունից, Եր., 1981, էջ 8:
5. Հայոց պատմություն, հատոր 3, գիրք 1, Վ. Բարխուդարյան, Ա. Մելքոնյան և ուրիշներ, Եր. 2010, էջ 29:
6. ՀԺՊ, ԳԱ հրատ., հ. 4, Եր., 1971, էջ 128:
7. **Մ. Կաղանկատուացվոյ** Պատմություն Աղուանից աշխարհին, Մոսկվա 1860, էջ 270-271:
8. Պողոսյան Ս. Պ., Հայ ժողովրդի պատմություն, Եր 1965, հ. 2, էջ 260:
9. **Փաշայան Հ.**, 1921 թ. հուլիսի 5-ի Կովբյուրդի որոշման իրավաքաղաքական տեսանկյունները և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքային ամբողջականության խնդիրը, Միջազգային գիտաժողովի նյութեր՝ նվիրված ԱրԳՀ հիմնադրման 40-ամյակին, Ստեփանակերտ, 2010, 222-224 էջեր:
10. **Иоаннисян А.**, Иосиф Эмин. Ер., 1989. 291 стр.

³ Նույնիսկ Խորհրդային Ադրբեյջանի ղեկավարությունը խախտելով 1921 թ. հուլիսի 5-ի Կովբյուրդի որոշման բազմաթիվ կետեր, այնուամենայնիվ 1923 թվականի հուլիսի 7-ի ԼՂԻՄ կազմավորման մասին դեկրետում, ստիպված է եղել հատուկ ծանոթագրությամբ մատնանշել այն մասին, որ «բոլոր արոտավայրերը, այգիները, հողի ու ջրի փաստական տնօրինումը պահպանվում է ներկայիս տերերի համար», այսինքն՝ հայերի համար: Տե՛ս [23]:

11. **Иоаннисян А.**, Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия, Ереван, изд. ЕГУ, 1947г., стр. 237.
12. **Новосельцев А. П., Черепнин Л.В., Шушарин В.П., Щанов Я. Н.**, Древнерусское государство и его международное значение. М., 1965, стр. 385.
13. **Соловьев С. М.**, История России с древнейших времен, сочинения, М., 1988, книга 1, т. 1-2, стр. 144.
14. **Эзов Г.**, Сношения Петра Великого с армянским народом, СПб., 1898.
15. **Յալալըրա մաթարաճը**, մասալեբո ռուսեո-սաթարտեղեղոս շրտոյերտոբոս օսթորոտոճան XVIII սալեկոյնոս II ճաթեզրոս, No. 3, ճաթոլո 1, տոբոլոսո 1988, ճՅ. 358. **Մաճարաճն Վ.**, Նյոլթեր 18-րդ դարի երկրորդ կեսի ուոս-վրաթակաճ հարարերոյոյոննրի պատմոյոյոնիթ, հմ. 3, մաս 1, Թ-թիլիսի 1988, էլ 358, վրաթերն:
16. Բրյուսեյաճ հայտարարոյոյոնը հակադրելի է Արցախի Հանրապետոյոյոյաճ քաղաքակաճ օրակարգին. Նեյլի Բաղդասարյաճ. / ԱՀ նախաթախի միթաթթալիճ հարարերոյոյոննրի հարթերոյոլ խորիդրակաճ/ https://www.aravot.am/2022/05/23/1269739/?fbclid=IwAR0wNwwQ1JAfgOvI1k_7x1kcHFAY4vFMerkb5mYBODtsev6LJrmeKyPlkbc
17. «Կարող է լինել Ռուսաստաճի հետ հարարերոյոյոննր՝ ուղղախայաթի շրթանակնրոյոճ». Արայիլ Հարոյոյոյոյաճ, <https://news.am/arm/videos/53006.html>
18. Ռ-Դ-ն պիտի հայ ժողովրդի վստախոյոյոնը բարձրաթնելոյ միթոննր ճեռնարկի, այապես 1-2 տարի հետո ուոսնրը դուրս կմաճաճ ՀՀ-իթ և Արցախիթ. Միթրայել Համբարճոյոյաճ <https://www.tert.am/am/news/2022/04/11/hambardzuyan/3788802>,
19. Ռուսաստաճ, ԱՄՆ, Եվրոպա. որն իճպես է վերաթերոյոճ Արցախի խնդրին, <https://verelq.am/hy/node/108410>
20. Ռուս խաղաղապախիննր կմաճաճ այնքաճ ժամաճակ, քաճի դեռ հակամարտոյոյոնը յոճվաճ չէ. Դալիթ Բարայաճ, <https://news.am/arm/news/701222.html?fbclid=IwAR2hos3W-mmVUgOOecaDz-55EjsUJoHMO9cWSsgm7-sUDRkWUaI>
21. **Քեոյաճ Պ.**, Ռուս-թուրքակաճ հարարերոյոյոննրի միտոյոննրը. Վերեթրնրի ու վայրեթրնրի դինաճիկաճ, https://generalnews.am/hy/article/26d07ae4d7900394b2efaae387b01072/?fbclid=IwAR3M979hwKiEhyQWWHFrZb2VkwWnhF_YkIKRrEYGS9cWdnWdYzy5R_zMdcw
22. Гюлистанский мирный договор 1813 года, https://ru.wikisource.org/wiki/Гюлистанский_мирный_договор_1813_года
23. ДЕКРЕТ АЗЦИКА СОВЕТОВ «ОБ ОБРАЗОВАНИИ АВТОНОМНОЙ ОБЛАСТИ НАГОРНОГО КАРАБАХА», 7 июля 1923 г., Собрание узаконений и распоряжений Рабоче-Крестьянского Правительства АССР за 1923 г. Баку, 1923, стр. 384-385.
24. Заявление Президента Азербайджанской Республики, Премьер-министра Республики Армения и Президента Российской Федерации, <http://www.kremlin.ru/events/president/news/64384>
25. ИЗ ПРОТОКОЛА ЗАСЕДАНИЯ ПЛЕНУМА КАВБЮРО ЦК РКП (б) О ПЕРЕСМОТРЕ РЕШЕНИЯ ПРЕДЫДУЩЕГО ПЛЕНУМА И ОСТАВЛЕНИИ НАГОРНОГО КАРАБАХА В СОСТАВЕ АЗССР С ПРЕДСТАВЛЕНИЕМ ЕМУ ШИРОКОЙ ОБЛАСТНОЙ АВТОНОМИИ, 5 июля 1921 г., РГАСПИ, ф. 64, оп. 1. д. 1, л. 124. Заверення копия; Опубли. в журн. «Вестник архивов Армении», 1989 г., N 2, д. 14, стр. 77-78.
26. **Ильхам Алиев:** Мы - государство-победитель, Армения - побежденное государство, <https://minval.az/news/124251531>
27. **Ильхам Алиев:** О каком статусе «Нагорного Карабаха» может идти речь, если мы определяем границы с Арменией?, <https://haqqin.az/news/247838>
28. Лавров назвал сближение России с восточными странами неизбежным, <https://ria.ru/20220514/lavrov-1788533617.html>
29. Лавров заявил о необходимости обустроить "самый перспективный регион мира", <https://ria.ru/20220523/evraziya-1790286485.html>
30. **Лепехин:** Присутствие РФ препятствует Азербайджану переключить карту Южного Кавказа, <https://news.am/rus/news/701974.html>
31. Медведев считает, что вопрос о статусе Карабаха обсуждать преждевременно, https://tass.ru/politika/10593305?utm_source=yandex.ru&utm_medium=organic&utm_campaign=yandex.ru&utm_referrer=yandex.ru
32. **Модест Колеров.** Судьба Армении и Нагорного Карабаха прямо зависит от победы России на Украине. https://vk.com/wall484095899_2113
33. Персидский поход Петра 1, <https://istoriarusi.ru/cag/persidskij-pohod-petra-1.html>
34. **Силаев:** Требовать досрочного вывода миротворцев из Карабаха - значит радикально портить отношения с РФ, <https://news.am/rus/news/704331.html>
35. Статус Карабаха должен быть определен в будущем - Лавров https://arka.am/ru/news/politics/status_karabakha_dol_zhen_byt_opredelen_v_budushchem_lavrov/,
36. Press statement by President Michel of the European Council following a trilateral meeting with President Aliyev of Azerbaijan and Prime Minister Pashinyan of Armenia, <https://www.consilium.europa.eu/en/press/press-releases/2022/05/23/press-statement-by-president-michel-of-the-european-council-following-a-trilateral-meeting-with-president-aliyev-of-azerbaijan-and-prime-minister-pashinyan-of-armenia/>

Տճաճ/Հաճննլել է՝ 16.06.2022
 Թեթրոյոյոն/Գրաթրալել է՝ 30.06.2022
 Թրաթա/Ընդրոնլել է՝ 05.07.2022